



# ՍՈՒՐՔ ԾԱՆՈՒ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ



### ՎԵՐԱՓՈՒՈՒՄ ՍՈՒՐՔ ԱՍՏԻՊՈՒՄԻ

15 ՕԳՈՍՏՈՍ 2021

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԷՆ (4.9-15, 9.6)

**Փ**եսան.  
Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէ՛կ նայուածքով, վզիդ շնորհալի մէկ շարժումով:

Ի՛նչ զգլխիչ է սէրդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն աւելի քաղցր է սէրդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր ու կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

... Բուրաստան-  
ներու աղբիւրն  
ես. կեանքի  
ջուրին ալը...

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտէզ, կնքուած աղբիւր:

Նոնենիներու դրախտ մըն ես դուն ամենէն ընտիր եւ բուրումնաւէտ

տունկերով՝ հինայ ու նարդոս, նարդոս ու քրքում, խնկեղէզ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծառերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկենինները: Բուրաստաններու աղբիւրն ես. կեանքի ջուրին ալը, որ Լիբանանէն կը բղխի:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ, մօրդ արգանդէն քեզ պատրաստեց, ո՛վ կիներու գեղեցկագոյնը. մայրդ անթերի ծնաւ քեզ:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ ...

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

#### ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(7.10-16)

**Դ**արձեալ, Տէրը այս պատգամը ղրկեց Աքազի, ըսելով. «Տէր Աստուծմէդ քեզի համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ երկինքի բարձունքէն»: Աքազ պատասխանեց. «Ո՛չ, զԱստուած չեմ փորձեր»:

Այն ատեն Եսայի ըսաւ.

«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ բաւեր որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք, որ կը փորձէք Աստուծոյ համբերութիւնը եւս հատցնել: Ծիշդ այդ պատճառով Տէրը ի՛նք հետեւեալ նշանը պիտի տայ ձեզի.– Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «էմմանուէլ» պիտի կոչէ:

Անիկա կարագով ու մեղրով պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին անիկա բարին ընտրել ու չարը մերժել չսորված՝ երկու երկիրներն ալ, որոնցմէ դուն կը վախնաս, իրենց թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու երկիրդ պիտի փրկուի»:

Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «էմմանուէլ» պիտի կոչէ:

#### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

#### ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆԳ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(3.29-4.7)

**Ա**պա, ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ

Որքան  
ատեն որ  
հոգեւորապէս  
անչափահաս  
էինք՝ բնութեան  
ոյժերուն:  
Կենթարկուէինք  
ու կը  
ծառայէինք:

... Աստուած  
մեր  
սիրտերուն  
մէջ զրկեց  
իր Որդիին  
Հոգին, որով  
զԱստուած  
«Հայր» կը  
կոչենք:

անիկա անչափահաս է՝  
տարբերութիւն չունի  
ծառայէ մը, քանի  
խնամակալներու եւ  
հոգաբարձուներու  
ենթակայ է, մինչեւ  
հասնի իր հօրը որոշած  
ժամանակակէտը: Նոյնն  
է մեր ալ պարագան:  
Որքան ատեն որ  
հոգեւորապէս անչափահաս  
էինք՝ բնութեան ոյժերուն  
կ'ենթարկուէինք ու կը  
ծառայէինք: Բայց հիմա  
յարմար ժամանակը հասած  
համարելով, Աստուած  
աշխարհ զրկեց իր Որդին, որ  
մարդկային մօրմէ մը ծնաւ  
եւ Մովսիսական Օրէնքին  
տակ ապրեցաւ, որպէսզի  
մեզ օրէնքին գերութենէն  
փրկէ եւ Աստուծոյ որդիներ

դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝  
Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր  
Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը  
կոչենք: Ուստի, այլեւս ծառայ չէք, այլ որդի-  
եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի  
ժառանգէք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(2.1-7)

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրա-  
մանագիր հանեց՝ իր կայսրութեան  
սահմաններուն մէջ գտնուող բոլոր  
բնակիչներուն մարդահամարը կատարելու:  
Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ  
Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի օրերուն:  
Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար  
իր անունը արձանագրել տալու համար:  
Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար,  
Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր  
անունը արձանագրել տալու համար գնաց  
Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ  
թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար  
իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդա-  
բերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր  
անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի  
մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ  
պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ՄԺԵԼԵՅԷՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՈ  
ԵՒ  
ՁԵՐ ՀՊԻԱՆՈՒԹԻԻՒՆ  
յԱՅՏԱԵՅԷՐ (like).  
[www.facebook.com/  
SourpHagopChurch-  
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)  
ՄԺԵԼԵՅԷՐ ԱԵԵ  
Ս. ՅԱԿՈՒ  
ԱՌԱՋՆՈՐՈՒԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԿԱՅԷՁՈՆ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻԻՒՆԵՐՈ  
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷՐ ԿՐՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻՊԼՈՄԱՏԻՆ: